

րէաս Երուսաղէմացի, Յովհաննէս Դամասկացի և այլք իրենց Այլակերպութեան ճառերով կը վկայեն, ինչպէս Դ. Ե. և Զ. դարերու ուխտաւորներն ալ կը հաստատեն, թէ Թաբոր լեռը եղաւ Փրկչին Այլակերպութեան լեռը:

Կ. Պոլսի Ե. ժողովը 553 ին Թաբորի վրայ հաստատեց եպիսկոպոսութիւն մը: Դ. դարէն սկսեալ ան եղաւ նշանաւոր ուխտատեղի մը: Դ. դարու լատին Ուխտաւորուհին և այլք ուխտի գացած են Թաբոր լեռը:

Մեր այս գրուածքը պիտի ունենայ երեք մաս. — Ա. Թաբորի եկեղեցիներուն պատմութիւնը, Բ. Անոնց նկարագրութիւնը, և Գ. Թաբորի մասին մեր ազգային յիշատակարանները:

Ա. — Քրիստոնէութեան շատ կանուխ թուականներուն Թաբորի վրայ կառուցուած էր ընդարձակ եկեղեցի մը, յարակից երկու եկեղեցիներով: Ե-է դար Թաբորի եկեղեցիներուն ամենէն պայծառ ժամանակն էր և ամէն ազգէ կրօնաւորութիւն մը հասած էր իր զարգացեալ վիճակին: Նոյն ժամանակին կ'այցելեն Բլէզանսի (Իտալիա) Անտոնինոս, և Արգուլֆ եպիսկոպոս: Նոյն եկեղեցիները, ինչպէս նաև տեղւոյն վանքերը և հիւրանոցները կը քանդուին և Սաչակիրք կը նորոգեն զանոնք:

Թանկրէտ երբ 1099 ին տիրացաւ Գալիլիոյ՝ գրաւել տուաւ Թաբորի ամրութիւնները: 1101 ին իր զինուորները պարպեցին զայն, թշնամւոյն սպառնալիքին տակ մնացած Յոպպէի պարիսպներուն քով ուրիշ զինուորներու հետ կատարելու համար իրենց կեդրոնացումը: Թանկրէտ Գալիլիոյ իշխանապետութեան խազաղ ստացողը եղածին պէս, Թաբորի վրայ հիմնեց վանք մը և օժտեց զայն առատաձեռն նպաստներով. այս վանքը իր առատաձեռնութեանը և ռազմական կարևորութեանը պատճառաւ բերդի մը վերածուեցաւ: 1101 ին աբբայ Ժէրար կը վարէր զայն և վանական մը հոն կ'ընդօրինակէր Կիկերոնի յօրինած Սկիպիոնի Երազը խորագրով ձեռագիրը, որ պահուած է Կանդի մատենադարանին մէջ: Միւսնոյն տարին Պաղատին Ա. հաստատեց Թանկրէտի կողմէն Ս. Փրկիչ եկեղեցիին տրուած պարզաները: 1102 ին Ժէրար եպիսկոպոսական տիտղոսով ներկայ կ'ըլլայ Երուսաղէմի ժողովին (Mansi, ժողովք ԻԱ): 1103 ին Փասգալ Բ. կոնդակով մը կ'ընծայէ անոր Գալիլիոյ արքեպիսկոպոսութեան տիտղոս և Պալլիում: Պահուած է այն կապարեայ կնիքը՝